Հաստատում եմ՝

Դպրոցի տնօրեն՝ Ա.Սարգսյան «22» մարտի 2025թ.

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցի 2025-2026 ուսումնական տարվա ընդունելություն

1. Ընդունելությունը կազմակերպել մրցույթի միջոցով 7-րդ, 8-րդ և 10-րդ դասարանների համար:
2. **Մաթեմատիկա առարկայի քննությունը 7-րդ և 8-րդ դասարաններում կազմակերպել երկու փուլով:**
3. **Առաջին փուլն անցկացնել՝**

   7-րդ դասարան՝ **հունիսի 18-ին՝ ժամը 12:00-ին,**

   8-րդ դասարան՝ **հունիսի 18-ին՝ ժամը 9:00-ին:**
4. Առաջին փուլում տարբերակները պարունակում են՝ 7-րդ դասարանում **16**, իսկ 8-րդ դասարանում **20** խնդիր-վարժություններ, որոնց լուծման համար տրվում է 90 րոպե:
5. Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:
6. 7-րդ և 8-րդ դասարանների քննությունների ժամանակ միկրոհաշվիչից օգտվել չի թույլատրվում:
7. Երկրորդ փուլ են անցնում առաջադրանքների 50% և ավելի միավոր հավաքողները:
8. **Երկրորդ փուլն անցկացնել՝**

   7-րդ դասարան՝ **հունիսի 23-ին՝ ժամը 9:00-ին,**

   8-րդ դասարան՝ **հունիսի 24-ին՝ ժամը 9:00-ին,**
9. Երկրորդ փուլում տարբերակները պարունակում են 8-ական առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2,5 միավոր (ընդամենը 20 միավոր), որոնց լուծման համար տրվում է 150 րոպե:
10. Երկրորդ փուլի աշխատանքները գրվում են ծածկագրված տետրերում:
11. Դիմորդները պետք է ներկայանան քննական թերթիկներով՝ նշված ժամին. ուշացումով ներկայացած դիմորդը զրկվում է քննությանը մասնակցելու իրավունքից:
12. Դիմորդի քննասեղանը որոշվում է վիճակահանությամբ:
13. Նախնական ցուցում-բացատրություններ տալուց, յուրաքանչյուր աշակերտին մեկ տարբերակ բաժանելուց հետո նշվում է ժամանակը:
14. Քննասենյակներում հսկողությունն իրականացնում են տնօրենի հրամանով նշանակված կազմակերպիչները:
15. Դպրոց ընդունվում են երկրորդ փուլում ավելի բարձր միավորներ հավաքած դիմորդները /մրցույթին մասնակցում են միայն 8 և ավելի միավորները/: Ամենացածր անցողիկ հավասար միավորների դեպքում հաշվի են առնվում առաջին փուլի միավորները:
16. **10-րդ դասարանի քննություններն անցկացվում են՝**

հունիսի 21-ին՝ ժամը 9^{00}-ին- ֆիզիկա, տևողությունը 150 րոպե,

հունիսի 26-ին՝ ժամը 9^{00}-ին- մաթեմատիկա, տևողությունը 150 րոպե:

17. Ֆիզիկայի քննության ժամանակ անհրաժեշտ է ունենալ միկրոհաշվիչ:
18. 10-րդ դասարանի ֆիզիկա առարկայից 8 և ավել միավոր հավաքած դիմորդները կմասնակցեն մաթեմատիկայի քննությանը, իսկ մրցույթին կմասնակցեն մաթեմատիկայի քննությունից 8 և ավել միավոր հավաքած դիմորդները:
19. **Արդյունքների հրապարակում**.

    7-րդ դասարան՝ առաջին փուլ հունիսի 19-ին ժամը 19:00-ին,

    7-րդ դասարան՝ երկրորդ փուլ հունիսի 24-ին ժամը 19:00-ին,

    8-րդ դասարան՝ առաջին փուլ հունիսի 19-ին ժամը 19:00-ին,

    8-րդ դասարան՝ երկրորդ փուլ հունիսի 25-ին ժամը 19:00-ին,

    10-րդ դասարան՝ ֆիզիկա հունիսի 22-ին ժամը 19:00-ին,

    10-րդ դասարան՝ մաթեմատիկա հունիսի 27-ին ժամը 19:00-ին:
20. **Արդյունքների բողոքարկումներ**.

    7-րդ դասարան՝ առաջին փուլ հունիսի 20-ին ժամը 13:00-14:00,

    7-րդ դասարան՝ երկրորդ փուլ հունիսի 25-ին ժամը 13:00-15:00,

    8-րդ դասարան՝ առաջին փուլ հունիսի 20-ին ժամը 14:00-15:00,

    8-րդ դասարան՝ երկրորդ փուլ հունիսի 26-ին ժամը 13:00-15:00,

    10-րդ դասարան՝ ֆիզիկա հունիսի 23-ին ժամը 13:00-15:00,

    10-րդ դասարան՝ մաթեմատիկա հունիսի 28-ին ժամը 13:00-15:00:
21. **7-րդ և 8-րդ դասարանների առաջին փուլի բողոքարկումը կատարվում է միայն տեխնիկական վրիպումները բացառելու համար:**
22. 10-րդ դասարան ընդունվում են երկու քննություններից գումարային ավելի բարձր միավոր հավաքած դիմորդները:
23. 2025թ. մաթեմատիկա և ֆիզիկա առարկաների օլիմպիադաների հանրապետական փուլի 7-ից 11-րդ դասարանների դիպլոմակիրները կարող են 2025թ. սեպտեմբերի 1-ից դպրոցի համապատասխան դասարան ընդունվել հարցազրույցի միջոցով:
24. 2025թ. Կորիզ մաթեմատիկա մրցույթի 6-ից 11-րդ դասարանների հաղթողները կարող են դպրոցի համապատասխան դասարան ընդունվել հարցազրույցի միջոցով:
25. Արդյունքները կտեղադրվեն physmath.am կայքում:

Աշխատակարգը հաստատվել է 2025թ. մարտի 22-ին կայացած մանկավարժական խորհրդի նիստում: